

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Туфляго. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մ Ե ն լ Ե զ Ե Ե Ե

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԿՐԵԱՆՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ. Կ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԸԿԱՆ ՀԵՌԵԿԻՐՆԵՐԻ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԵՌԵՎԱՆԻ ՀԵՄԵՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներէն պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСТЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Այդ տեսակ բան չէինք սպասում: Ներքին և արտաքին իրաւունքները: Արտաքին տեսակետները: Ֆրանսիա, Անգլիա: Արտաքին լուրերը: «Մշակի» հեռագիրները: Յայտարարութիւնները: Տեղեկացւոյց: Բանասիրական, Մանկական յիշողութիւններէն:

ԱՅՏԻ ՏԵՍԱԿ ԲԱՆ ԶԷԻՆՔ ՍՊԱՍՈՒՄ

Մենք քանի մի անգամ առիթ ունեցանք յայտնել մեր միտքը «Օժօր» լրագրի մասին: Մենք այդ լրագրի առաջին համարէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Երբեք 1858 թ. Երեւանէն էր, երբ իմ վեց տարին լրացած, ոտս, ինչպէս ասում են առհասարակ, եօթի մէջէն էի դնում, հայրս դեռ ապրում էր: Նա որպէս գերդաստանի գլուխ, համարվում էր տան լիազօր իշխան: Բացի մօրիցս, ապրում էր և որդւման հոգի տալու: Դոցա վրա աւելացնելով և ինձ հետ մեր գերդաստանի ամբողջ կազմակերպութիւնը, Հայրս չափազանց բարկացող և խիստ բնաւորութեան տէր մարդ էր, որա ամեն մի հայեցացը և ակնարկութիւնը ինձ վրա դող ու սարսափ էին գցում: Չը նայելով իմ ամեն անգոյշ շարժվածքը վարձատրվում էր նրանից յանդիմանութիւններով և երբեմն պատժով, բայց ես իմ մանկական խելքովս չէի նրա սիրտը, և գիտէի որ նա ինձ սիրում է: Տառս գրեթէ հօրս հաւատարմացի ձայն ունէր տան մէջ, Որքան իմ աչքս վախեւում էր հօրից, տանն անգամ աւելի շատ սիրում էր ինձ տառս: Ինչ յայտնաբեր և անդգուծելով ինձ իմ կողմից տան մէջ, նա իմ խաթրին չէր դիպչում, երբեմն իմ գործած յանցանքներս այդ ողորմելին իր վրա էր առնում և այդպիսով ինձ ազատում պատասխանատուութիւնից: Ես ամենից աւելի պարտական եմ հանգուցեալ տառս, Գա ամեն միջոց և հնար

արդէն ամեն բան սպասում էինք նորանից, բայց այնպիսի բան ինչպէս նորա № 40-ի առաջնորդող յօդուածը, ճշմարիտ չէինք սպասում նրանից:

Մենք ինչ է ասում «Օժօր» լրագիրը: Տեղական լեզուներով հրատարակվող լրագիրները, թէև յիշում է միմիայն «Մշակի» անունը, իրաւունք չունեն գանգատվել թէ քիչ բաժանորդներ ունեն, որովհետև նրանք հրատարակվում են հասարակութեան այն աննշան մասի համար, որ չը գիտէ

գործ է դրել իմ կեանքին ապահովութեան համար, որպէս արթնուն հրեշտակ հաւում էր նա իմ ամեն քայլափոխի վրա: Հերիք էր մի փոքր ցաւ գգացի իմ մէջ, մեր թաղի յայտնի վախ չափող պառաւանքի, գրեացնելի և այլ կախարհութիւնների տնէրը ձեռքիցս բռնած պտտում էր ինձ հետ, ամեն տեղից հայցում էր ինձ համար փրկուածի: Գա այնքան հաւատ չէր ընծայում դեղերի մարդ բժշկիւն, որքան գրեացնելի թղթերի վրա արած օրհնութեանը: Իմ թաւիշեայ, չորջր պատուական մորթիից չըջապատած, զլխարկել մէջ, գրեթէ մեր քաղաքի նոյն ժամանակի երեւի գրեացնելը ունէին իրանց հեղինակութիւնները: Ես շատ լաւ յիշում եմ իմ անաստուած տառսի մի չափազանց անխիղճ մտանք գործը, երբ մի կախարհութիւն իմ գլխացաւ հիմնովին կտրելու համար հրամայեց նրան սե աքրորը սող սող գնել հողի ամանի մէջ և թաղել նրան խոր գետնի տակ: Այդ հրամանը տառսի կողմից կատարվեց այնպէս, որպէս մի ծառայ կը հնազանդվէր իր տիրոջը, երբ վերջինը տուել էր նրան հրաման մի գաւաթ ջուր տալու: Երբեք մտքիցս չէ գնում, որպէս արիւթութեամբ և սառը հոգով այդ անողորմ կիւնը, կենդանի անասունը դրեց ամանի մէջ առանց խնայելու նրա վերջին աստիճանի աղաղակը ու ճիգը, ամփոփեց նրան իր ձեռքով փորած գերեզմանի մէջ: Բայց պէտք է խոստովանել և այն, որ տառս ունէր և մի քանի Աստուածանշանոց գործեր, եթէ այսօր էլ ընթերցող ձեռք հանդիպի մեր այգին այցելութիւն անել, զուր կը տեսնէր այնտեղ մի շատ անսովոր երեւոյթ: մի բաւական հասակաւոր ընկուղեւի ծառ, զրա արմատին կից բարձրացած մի անշուք մատուռ, ծիրանի ծառի ճիւղերի վրա կայցած են հա-

ոչ ուռեւերէն, ոչ էլ ի հարկէ այլ եւրօպական լեզուները: Իսկ հայոց լուսաւորված դասը, կրթողական աւելի լայն, բնդարձակ պահանջներ ունեւոյ, էլ հարկաւորութիւն չունի մայրենի լեզուով հրատարակվող լրագիրների մէջ:

Եթէ պ. Նիկողաձէ ասէր որ մանուկտապէս «Մշակը», իր կարծիքով, չէ լրացնում հայ հասարակութեան պահանջները, որ նա համարում է «Մշակի» խմբագրին գործին անպատրաստ մարդ, այդ ուրիշ բան կը լինէր... ամեն մարդ իրաւունք ունի իր կարծիքը և իր ճաշակն ունենալու...:

Բայց առհասարակ հերքել հայոց լուսաւորված դասի համար մայրենի լեզուով հրատարակվող լրագրի կարեւորութիւնը, դա այնպիսի մի հրեշտակ բան է, որին մենք չենք էլ իմանում ինչպէս պատասխանենք:

Պ. Նիկողաձէ ինքն տեղացի է, վրացի է, բայց նա եւրօպական կրթութիւն է ստացել: Նա վրացի է, բայց իր կրթութեամբ եւրօպացի է: Նոյնը և «Тифл. Вѣстн.» լրագրի խմբագիրը, որ հայ է:

Հարցնում ենք այժմ՝ ի՞նչի մի

գոտսի հնոտի կտորտանք, իսկ ծառի չորջր հողի վրա թափված խեցեղէն ամանի բեկորներ, այդ ծառին երկրպագողները մինչև այսօր էլ յաճախում են. Գեռ սրանից մի քանի տարի առաջ, այդ ծառը այն դերն էր կատարում մեր այգում, որպէս արգելված ծառի պտուղը դըրախտի մէջ նետահօր համար: Մեզ հրաման չը կար նրա պտուղը քաղել, և թէ շատ պատկառանքով մեր պարագն էր մանգալ նրա մօտը: Այս, քանի օր էս լայն էի լինում, երբ մի անգամ անդուշտաբար անցայ նրա տակից, գլուխս դժբաղդաբար մի չորացած ճիւղի հանդիպեց և կտորվեց այն, այդ օրից սկսած մասն քաղէ առ քաղէ պատկերանում էր իմ առաջ: Բայց թէ ինչու այդ ընկուղեւին իր չըջապատ ծառերից բացառութիւն է կազմել և արժանացել այդ կոչմանը, ահա զրա համառօտ պատմութիւնը, որ իմ ականջովս լսել եմ ողորմած հոգի տառիցս, երբ ես մի օր շատ ստիպեցի նրան պատմել: «Մի օր բաւայ, ան էրեւի թէ սուրբ Օվանի մեր բաղը գաւառ հողը ինձ տուել չը տառ, քանի միտս է գալիս միտս շարժվում հաւելում է, մին էլ ինչ տեսնեմ, միտնեմ ոտի տակին, հերք բաղում չէր, նա բաղարը դեղձ էր տարել ծառի տակ: Որք պառ էր, մեր էլ հնձանումը աղցան էր տապակում, ես էլ ուռի ծառի չորաքի տակին նստած քեզ համար գուլբա էի գործում, համ էլ մտիկ էի տալի որ բաղիցը հաւող չը գողանան. մին էլ ինչ տեսնեմ (կրեւր խաչակնքելով), մինը երկար խառ չըբերը հաղին, սիւպակ միտքը կատու ձին ըլէր խշխշխելու զուտ էկա թմբան միջից առաջիկա կանգնեց, մի ձեռումը ոտիկ գտապանը ֆոֆոտում էր, էն մէկէլ ձեռումն էլ մայր Աստուծոյն էր ֆրիտատին խոտած: Ես, էնա քիչ էր մնում խեղճամաղ ըլէի վեր

հայ, կամ մի վրացի եւրօպական կրթութիւնը ստացած կարող է ուռաց լրագիր հրատարակել և իր հրատարակութեամբ, իր գրվածներով համապատասխանել ընթերցողի պահանջներին, իսկ նոյն հայը կամ նոյն վրացին, նոյն եւրօպական կրթութիւնը ստանալով՝ չէ կարող լրացնել իր հայրենակիցների պահանջները հրատարակելով մի թերթ իր մայրենի լեզուով:

Ուրեմն եթէ մի տեղացի որ եւրօպական ուսում է ստացել հրատարակում է իր մայրենի լեզուով մի թերթ, նա պէտք է անպատճառ նեղ և սահմանափակ մտքեր յայտնէ, իսկ չէնց որ նա սկսում է մի ուռաց թերթ հրատարակել, պ. Նիկողաձէի պէս, նա իսկոյն ստանում է լայն, բնդարձակ մտքեր և իր գրվածներով բուականացնում է հասարակութեան քաղաքակիրթ մասի պահանջներին:

Ուռաց լրագրի մտքերը միայն այն ժամանակ ուղիղ կը լինէին, եթէ կամ մեր հայոց լուսնայնաբար արտայայտել եւրօպական մտքերը, կամ մեր հայոց ին տեւի գէնցի ան այնքան զարգա-

նակէի, միտնեմ ոտի տակին, չը թողայ ասեց՝ «մի վախիկ պառաւ, ես սուրբ Օվանէն եմ, արի իմ ետեկցա»: Գա գնաց, ես էլ գնում էի քամակիցը: Նրա գնացած ձառքի վրա լիւր քուլայ քուլայ թափվում էր ամբի նման: Գա գնաց, ես գնացի ընչանք հաւանք էս պտուղի ծառի տակը: «Բոտեղ կաղնի ասեց ինձ, տեսնում ես էս ծառը, էս իմ օջախն ա, ըստեղ մի մատուռ չինի, ամեն չաբաթ իրիգուն իմ ոտիցն հրազ կը վառես, դողացող էրացնողները թող գան էստեղ, ես նրանց դողը կը կտրեմ գանաղի պէս: Թէ իմ հրամանը չը կատարես աչքը կը հանես: Ես ծառի պտուղը չէք քաղել, բաղին էլ մտիկ չես տալ, ես չեմ թողալ ըստեղ գողն ոտ ծած գայ: Հիւ էս խօսքը բերումն էր մին էլ տեսայ առաջիկա մարդ չը կայ կանգնած: Ոնց որ մի պղինձ տաքացրած ջուր չուռ տան գլխիս էն թահր էի քրդնել: Եթէ օրը լիսացաւ թէ չէ, կանչեցի մեր կատեպան (այգեպան): Սաքոյին, ասեցի, աչ որդի, քու էդ հիւանդութիւնը որ չի, մի տղամարդ ես մեր չհարում, էդ բողբ բուսող կտուտ մի սար ըլես կաղնած, արի ըստեղ մի մատուռ չինեմք, ըստեղ օրիկ օջախ ա, բաղիք նա հանի քեզ: Ուրք արի ըլի Սաքոյին, խօսքս գետն, չը տուեց: Երկու օր չանցաւ, էս մատուռը որ դու տեսնում ես, ես ու մեր Սաքոն չինեցինք», առաց և գորանով վերջացրեց իր պատմութիւնը: Ես լարած իմ բոլոր ուշադրութիւնս լսում էի բոլոր պատմութիւնը, բայց արդեօք ընկուղեւին մի օգնութիւն արեց Սաքոյին թէ ոչ, հարցի նրանից երկխոսական պարզամտութեամբ: Հանգուցեալը ըստ երեւոյթի սկսեց մի փոքր կապել, բայց նա ինձ ի հարկէ չէր կարող լաւ բել, որովհետև Սաքոյին նոյն իսկ հիւանդութեան համար որ ընկուղեւին արած աղաչանքը

ցած լինելը, որ մենք մեր բոլոր ուսումնական նրանք ստոր լինելին:

Հայոց լեզուի մասին մենք կարող ենք հաւատացնել պ. Նիկողային որ մեր լեզուն նոյնքան հարուստ է, նոյնքան ձգտւած է, նոյնքան ընդունակ է ամեն տեսակ միտք արտայայտելու և նոյնքան ընդունակ է առաջադիմութեան, — որքան ուսուցիչ և ամեն եւրոպական լեզու: Մենք խօսում ենք մեր նոր աշխարհաբան լեզուի մասին, էլ չենք խօսում մեր հարուստ կապիական գրաբանի մասին, որ ոչինչով պակաս չէ հին յունարէնից և լատիներէնից:

Իսկ մեր ինտելիգենցիայի մասին, — թող «Օձօրէն» լրագիրը նրան շղջորթութե իր անձնական նպատակների համար, — բայց մենք ստիպված կը լինենք նրան պատասխանել որ մեր հայոց ինտելիգենցիան այնքան անդադագացած և տգէտ է, որ նրան ոչինչ չէ հետաքրքրում: Հայ պաշտօնեան, կամ ինտիտուտից գուրս եկած հայ օրիորդը՝ եթէ գոնէ ուսերէն կարդային, — մենք շատ գոհ կը լինէինք, որովհետեւ ընդհանրապէս զարգանալով որպէս մարդկային էակներ, նոքա վերջը կը վերագառնային զէպի ազգութեան գաղափարը, զէպի մայրենի լեզուն... Բայց ձեր գոված ինտելիգենցիան ոչ ուսերէն, ոչ էլ մի որ և է օտար լեզուով է կարդում... Եւ կատարելապէս ոչինչ չէ կարդում, այլ բերել է տալիս «Вѣстн. Ев-

ропы», «Голосъ», կամ ստանում է գուցէ «Օձօրէն» միմիայն մօզայի համար... Բայց երբեք չէ կարդում, գուցէ չէ էլ բաց անում թերթը:

Ինչպէս, օրինակ, կը բացատրեմեզ պ. Նիկողային այն երեւթը, որ «Մշակի» ստացողների և համակրողների մեծ մասը, կամ նոքա են, որոնք բացի հայերէնից ոչ մի լեզու չը գիտեն, կամ նոքա են, որոնք ճշմարիտ կատարելապէս կրթված, ուսում առած, ճշմարիտ եւրոպական ուսում ստացած մարդիկ և կանայք են...

Այս րօպէսն այս թերթը քննի ճշմարիտ եւրոպական կերպով կրթված հայուհիների ձեռքումն է գտնվում, կամ որքան ճշմարիտ եւրոպական կրթութիւնը ստացած մարդիկ մեր թերթը կարդում են...

Բայց ի հարկէ նրանք քիչ են թուով և այդ պատճառով մեր բաժանորդների թիւն էլ քիչ է:

Ուրեմն մենք յոյս ունենք որ մեր լրագիրները ոչ թէ միայն չը պէտք է դադարեն, այլ այն ժամանակ միայն կը ստանան իրոնց նշանակութիւնը, երբ հայը ճշմարիտ, որպէս մարդ կը զարգանայ: Մինչև այն ժամանակ զբոսար է, այդ, առաջ տանել գործը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ փետրվ. 6.

Գանձակի երկսեռ դպրոցաց հոգաբարձութիւնը որ հաստատված էր 1875 ամի յունվար

ապրիլին էր անցել, մեր այդ խօսակցութիւնից մի ամիս առաջ եւս գիտէի որ խեղճ Սաքօյին տարան սուրբ Թիրանի ուխտատեղը: Սաքօյի հիւանդութիւնը սրանից չէր, գրեթե ամբողջ էր, որ նրան տանենք սուրբ Թիրանին: Գեռ վերջին խօսքերը հազիւ էր արտասանել տառս, Սաքօյի գլխարկը միտն ընկաւ՝ եւ կը կարողացայ յաղթել իմ ծիծաղը որ առատութեամբ դուրս թուաւ իմ կուրծքից: Պէտք է խոստովանել իմ անժամանակ ծիծաղելու համար ստացայ բաւական յանդիմանութիւն, որովհետեւ տառս այդ կրօնականը բաղադրութիւն համարեց: Թիւրքերու պատճառը ոչ այլ ինչ էր թէ՛ ոչ մեր Սաքօյի սուրբ Թիրանի արած ճանապարհորդութեան մի շատ ծիծաղաբարձ անցքը: Ինչպէս յայտնի օրէնք էր սուրբ Թիրանի գնացողը իր անից մինչև այնտեղ և այնտեղից վերադարձը, իրաւունք չունի ոչ ոքի հետ խօսել, մինչև անգամ սրբի դրանը աղօթել պէտք չէ, որովհետեւ նա կարդում է սրտերի գաղտնիքը, հակառակ զէպիւում նրա աշխատանքը ապարդիւն է անցնում, ինչպէս փորձը շատ անգամ ցոյց է տուել: Երբ հանգամանքը մեր խեղճ Սաքօյին հրապարեց սուրբ Թիրանու օջախը, նա չը խօսկան մնալու պայմանը չը կարողացաւ ձգողութեամբ պահանջել: Եւ սուրբ Թիրանին գնալիս նստում է մի ծանրաքաղ խել վրա: Սաքօն այդ դանդաղաբարձ անասունի քայլերից օգուտ քաղելով քնում է, բայց այդ քնում սե է բերում նրա գլխին, երբ քնը աւելի է սաստկանում, գլուխը խոնարհում է կուրծքի վրա, և հապտին գլխարկը վայր է ընկնում գլխից: Վճի գդակի, գոռում է նա և դորանով խախտում է մի շատ նշանաւոր պայման: Հէնց այդ անդգուշութիւնը պատճառ եղաւ, որ խեղճ Սաքօն վերադարձաւ տուն առանց հա-

նելու սրբի գուռը, հաւատարմ լինելով որ իր աղօթքը այլ ևս ընդունելութիւն չի գտնի: Թողնենք Սաքօյին նրա հետ պատահած անցքի հետ: Այդ ժամանակից անցել էր ոչ անելի քան երկու տարի, երբ մի օր հայրս ձեռքիցս բռնած տանում էր ինձ խալիպայ-խզմարի տունը, խալիպայ-խզմարը այդ ժամանակի միակ և հոգաւոր ուսուցիչն էր, ինչ և ես երբեք չեմ մեղանչել, եթէ ուսուցիչ բառի փոխարէն, կրթիչ նրան դահլձ անունով: Մենք գեռ քսան քայլ հեռու էինք դպրոցից, երբ աշակերտները աղաղակը դարձնեցին իմ մէջ հազար ու մի մտածումներ: Վերջապէս մենք ներս մտանք դպրոցը, որտեղ հայրս առաջարկեց ինձ խալիպայ-խզմարի տեսութեանը: Վերջինն ինձ վրա մի պաշտօնական հայեացք դրեցող յետոյ, առաւ աշակերտներից մի գլուխ և տուեց ինձ կարգալու: Գործնով յարգելի ուսուցիչը կամենում էր իմ ուսմանս չափը քննել, եւ հազիւ կակաղելով արտասանեցի մի քանի խօսք: Խալիպայ-խզմարը կաղմեց ինձ վրա մի որոշ գաղափար և ապա հրամայեց ինձ աշակերտներին ամենաստորին չարժուած մի տեղ բռնել: Առաջին առարկան որ խօսեցի գրաւեց իմ ուշադրութիւնը գա էր պատից կալն տված ֆայախին, որին խզմարը շնորհաբաշխի անձական էր տուել: Գա էր ամենագործող հրահանգը որի միջոցով պատուելի ուսուցիչը պատրաստում էր ջանքեւան քերականութեան այժման պաշտող հերոսներին: Բաւական էր մի չնչին սխալումը, ֆայախին չարժուած էր իր տեղից: Ջնդանի տակ մտնող աշակերտները ձայնը ներս էին կանչում փողոցից անց ու դարձ անողներին, վերջինները աւելի անգութ էին, դրանք փոխանակ մեղմացնելու ուսուցչի կատաղութիւնը աւելի էին բորբոքում, անկող առնելն ա ընչանք ըտենց չի

ամառ, հրապարակեալ պաշտօն չարժանակելու նոյն տարվայ ապրիլի սկզբում. երեք տարվայ չըլանը լրանալու պատճառով, հաստատվեցան նոր հոգաբարձուք ներկայ տարու յունվար ամսում, որոնք նոյն ամսի 21-ին յանձնարեցին և ստացողական ցուցակով ստացան ուսումնաւորահաշարական ամենատեսակ չարժական և անչարժ կայքը և դրամական հաշիւը:

Աւելորդ չեմ համարում մեր պաշտօնավարութեան ժամանակամիջոցի համառօտ դրամական հաշիւը ներկայացնել ձեր պատուական լրագրի միջոցով յարգելի ընթերցողներին:

1875 ամի ապրիլի 1-ից մինչև նոյն տարվայ դեկտեմբերի 30-ն զանազան ժամանակամիջոցներում ստացվել է, մոտ՝ սպիտակ 20 փուղ 13³/₄ ֆունտ, դեղին 2 փ. և 8 ֆ., առ ձեռն պատրաստի գումար 5161 րուբլ 67¹/₂ կօպէկ, չորս հատ 50% տոմսակ գումարաւ 581 ր. 20 կ. և սպառել 297 ր. 43 կ., ընդամենն է 6040 ր. 30¹/₂ կ.: Մուտք ի 1-ն ապրիլի 1875 ամից 1-ին յունվարի 1878 ամի:

Գրաւոր և բերանացի կտակներով ստացված է 1542 ր. 50 կ., նուիրատուութիւնը միանաւոր 525 ր., տարեկան 821 ր., թոշակագրամբ աշակերտաց և աշակերտուհեաց 1350 ր. 85 կ., արդիւնք ուխտատեղեաց 227 ր. 45 կ., մոմի կըրպակից 2219 ր. 69 կ., անշարժ կալուածոց 2650 ր. 12 կ., տակաւ դրամոց 972 ր. 67 կ., պատկազրամներէց 86 ր. 47 կ., օժանդակութիւն Սուրբ Յովհաննէս եկեղեցուց 120 ր., մոմաղին Սուրբ Լուսաւորիչ եկեղեցուց երկրփոխանից 120 ր., չարժական կայքից (հին նստարանների վաճառումից) 25 ր. 50 կ., վիճակախաղից 160 ր. 50 կ., և ուսումնարանապատկան գրեթե քան ձեռնարկ մից 50 ր. 50 կ. մեր նախորդներէց ստացած գումարի հետ լինում է 16,912 ր. 55¹/₂ կօպէկ:

Դատար ի 1-ն յունվարի 1875 ամից 1-ն յունվարի 1878 ամի. Ռոճիկ ուսուցչաց 6664 ր. 5 կ., օրիորդաց համար դասական և ձեռագործութեան առարկայից 554 ր. 59 կ., մանրածախք — ծառաներին, փայտի և այլ մանր բաների 836 ր. 81 կ., օրիորդաց դպրոցի տան վարձ 593 ր. 30 կ., հանգուցեալ խանութ կուգանեանցի մօր թաղութիւն տուած է սնունդ 190 ր., բաղանիքի նորոգութեանց համար 608 ր. 84 կ., թեմական վերատեսչին ճանապարհածախք 100 ր., և հանգուցեալ խանութ կուգանեանցի կտակը հաստատելու և վկայ անելու դատաստանական ծախք 22 ր. 20 կ. ընդամենն է 9569 ր. 79 կ.: Դատարը մուտքից հանելով մնաց 7342 ր. 76¹/₂ կ., 1876 և 1877 ամաց մնացեալ ապառիկը, անշարժ կալուածի արդիւնքից 230 ր. եկեղեցեաց օժանդակութեանց և ուխտատեղի արդիւնքից 364 ր., բանխանութեւ եղած փողի տոկոս 140 ր. 85 կ.: Ընդամենն 734 ր. 85 կ., և մոմը, սպիտակ 8 պուղ. 28 ֆունտ, դեղին 1 պուղ. 16¹/₂ ֆունտ, որի արժողութիւնն է 297 ր. 56 կ.: Նորընտրի հոգա-

բարձութեան մեր յանձնած գումարի բոլոր լինում է 8375 ր. 17¹/₂ կ:

Ընթերցողները կը նկատեն մեր հաշիւից, որ մուտքը եղած է ի 1-ն ապրիլի 1875 ամի, իսկ ծախքը ի 1-ն յունվարի նոյն ամի, հարկ եւ համարում ասել՝ մեր նախորդները երեք ամսվայ մուտքը ժողովել էին և միացրել մեզ յանձնած գումարին, իսկ նոյն ժամանակամիջոցի ուսուցչաց ուճիկը 486 ր. 32 կօպէկ էին հոգացել, որը մենք տուինք:

Ծանօթ. Բացի վերոյիշեալ ապառիկները, կան նաև կամաւոր նուիրատուութեանց և թոշակատու աշակերտաց ապառիկների, որոնց հոգաբարձութիւնը համարեց երկրպետի և հաշիւ մէջ չը բերաւ, այլ մասնաւորապէս յանձնվեց նրանց հոգացողութիւնը:

Յակօր Լիսիկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական ուսուցիչներում տպված է հետեւեալ պաշտօնական հեռագիրը ասիական գործի գլխաւոր բանակից: «Փետրվարի 10-ին, առաւօտեան 11 ժամին թիւրքաց գործերը կատարելապէս թողնելն իրարմ քաղաքը: Քաղաքի բնակիչները շատ հանգիստ են: Ամբողջ քաղաքում մնացելի միայն թիւրք մի քանի զինուորականներ որպէս արքունի պահստների պահապաններ, որոնք զինազորարի պայմանների դժուրութեամբ պէտք է յանձնվեն ուսուցիչի ձեռքը»:

Շնորհակալութեամբ ստացանք «Ֆրիդօլին» կամ «Սէր և Ատեւութիւն» գործ ֆրիւստափոր Շմիդտի, թարգմանութիւն Տիգրան Նաւասարդեանի: Գրքիկի արդիւնքը պ. թարգմանիչը նշանակել է յօդուտ գաղթականների, — թիֆլիս, 3. Մարտիրոսեանի տպարան:

Շնորհակալութեամբ ստացանք մի փոքրիկ հայերէն գրվածք «Աստուծոյ Օտէկի գործերը, կամ հայրը ցանկեց, — թիֆլիս, տպարան 3. Մարտիրոսեանի:

«Тиф. Вѣстн.» լրագրում կարդում ենք: «Բաղդաւորապէս հացը սկսել է էժանանալ թիֆլիսի ՍՈՒՄՈՒՄ: Առավայ գինի 2 ր. և 20 կօպէկ 40 կօպէկից պուղը ընկել է մինչև 1 ր. 80 կօպէկ»:

ՇԱՄԱԼԻՆԻՑ մեր լրագրին հաղորդում են հետեւեալ: «Քաղաքիս բնակիչները, գլխաւորապէս հարուստները, կաղմեցին մի ընկերութիւն քառասուն անձերից, նուիրելով իւրաքանչիւրը 500 րուբլ, որ փոքր քանի մի գուրբը, նախ հանելու նպատակով»:

Քանի մանրամասնութիւններ, թէ պէտք է այդ գիշերը արթուն մնալ, այդ գիշերվայ մէջ կայ մի խորհրդաւոր ժամ, երբ ծառերը չարժուած են միմեանց տեղերից և ողջունում են միմեանց, ահա նոյն իսկ այդ րօպէս պէտք է հայցել ամեն խնդրվածք: Եւ այս նիւթի վրա բոլորի անածը լըսում էի ուշադրութեամբ, սպասում էի համարձման գիշերը գալու և ինչ որ մտադիր էի անելու, եւ ամեն կերպ աշխատում էի գաղտնի լինի, որպէս զի ծնողը արգելք չը լինէր:

Համարձման գիշերն էր: Բնութիւնը խոր նիրհած էր: Եւ կամայ, զգուշութեամբ դուրս եկայ տանից և կանգնեցի մեր տան առջևի պարտէզի ծայրում: Այդտեղ մի բարձր քարածալ էր, որի տակ Հրապարակ հանում էր իր սովորական աղմուկը. ծառերի ստափիւնը, գիշերվայ խոր լուռութիւնը ինձ վրա երկրկալով տպաւորութիւն էին գործում, սակայն եւ այնքան հեռու չէի տանից, որի լուսամուտից երեւնի երեւնի ընկնում էր այնտեղ վառվող հրապարակ աղտը: Մի քանի ժամեր յաջորդեցին միմեանց, բնութիւնը իր սովորական զուրթեան մէջն էր: Եւ րօպէ առ րօպէ անհամբեր սպասում էի, երբ պէտք է ծառերը միմեանց ողջունելու երեւթը կատարէին: Գիշերվայ ժամերը անցնում էին շատ դանդաղ, քունը աչքերիս վրա ծանրանալ էր սկսում, յանկարծ սթափված վեր թռայ տեղից, տեսայ որ գիշերվայ մթնութիւնը տեղի է տուել արեգակի փայլուն ճառագայթներին: Հրապարակ ծուրեան խորհրդաւոր անցնելիս եւ արթուն չէի:

7 փետրվարի Նրեան

ՀԱՄԱՐՈՒՅՑ մեզ հաղորդում են որ քանի մի օր է որ այդտեղ գարնանային եղանակ է անում։ Բուսական մի քանի ուտելիքներ տեսանք սկսում են երևալ չուքայում։

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ Պ. Անտոն Ղոր-դանեանցը նուրբել է Գանձակի երկեսը դպրոց-ներին 100 ր.։ Օրիորդաց մասնաւոր դպրոցին ա. Ենդիբարեանցը նուրբել 50 ր., իսկ Ս. Թարգ-մանչաց վանքի նորոգութեան համար նոյն տիկինը տուեց 150 ր.։ Անցեալ 1877 թ. Բա-գուի Մարգարիտական ընկերութիւնը տուեց է Գանձակի երկեսը դպրոցներին 180 ր., իսկ աղ-թատանցին 100 ր.։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Մայիսի 16-ի դաւաճանները մի փոքր հան-գստանալուց յետոյ նորից սկսել են իրանց պատերազմը հանրապետականների դէմ։ Թէ-պէտ իրանց օրգան եղող լրագիրները յայ-անում են թէ նրանք ցանկութիւն չունեն իշխանութիւնը իրանց ձեռք ձգելու, բայց նրանց գործերը ցոյց են տալիս թէ ամեն կերպով աշխատում են և երազում մայիսի 16-ի վերադարձը, մինչև անգամ արուեստահանութիւն բացվելուց առաջ։ Դրանք ծիւլ Սիմոնի մինիստրութեան կազմված և ընկած ժամանակն էլ նոյնպէս յայտնում էին իրանց ձգտումները լրագիրներին մէջ, բայց նրա կազմված օրը արդէն իրանք որոշել էին շու-տով կործանել տալ այդ հանրապետական մի-նիստրութիւնը և մայիսի 16-ի ցաւալի թա-կանք սկսել Ֆրանսիայի համար։ Բայց այժմ երբ մայիսի 16-ի մինիստրութեան դաւադրու-թիւնները յայտնված և խայտառակված են, այն բանը յուսալ ինչ որ յաջողված էր ան-ցած տարւոյ մայիսի 16-ին, դա կը լինէր մի անախորձիք, ժամանակագրական մի մեծ սխալ։

Նոր ընտրութիւնները հետզհետէ զօրաց-նում են հանրապետական տարրը դեպուտատ-ների ժողովում։ Մայիսի 16-ի մինիստրու-թեան ինտրիգներով ընտրված և ազգային ժողովին անվաւեր համարված դեպուտատ-ներին, ինչպէս և վախճանած Դիւկանի և Բասպայի տեղ նոր դեպուտատներ ընտրելու համար հրամայված է ընտրողական 14 շըր-ջաններին։ Ընտրութիւնները կը սկսվեն մարտի 3-ին և շատ յուսալ է որ հանրապետական-ները աջողութիւն ունենան այդ ընտրու-թիւնների մէջ։

Մի քանի լրագիրներ հրատարակում են թէ Մակ—Մահօն մարշալը և մինիստրութեան մէջ նորից անհամաձայնութիւն է ծագել և թէ մարշալը մերժել է ստորագրել մինիստ-րութեան կողմից իրան ներկայացված մի քա-նի գրութիւններ։ Այդ համաձայնը ցոյց են տալի թէ մայիսի 16-ի մինիստրութիւնը, Մակ—Մահօնի հին բարեկամները, կամենում են, կամ թէ գուցէ արդէն սկսել են, փոքր ի շատ ներգործել մարշալի վրա։ Բայց այդ համաձայնը այն տեսակից չէ, որոնց կարելի լինի շուտով հաւատ ընծայել։ հարկաւոր է մի փոքր էլ սպասել։

Եթէ Մակ—Մահօն այս անգամ իր հին բարե-կամների թելադրութիւններին ըսելով ուզէ Ֆրանսիան մասնել նոր խռովութիւնների, մի այնպիսի ժամանակ երբ նա պատրաստվում է համաշխարհական արուեստահանութեան կատա-րելը, դա կը լինի մի այնպիսի սխալ գործ որ կը զրգուէ իր դէմ ամբողջ Ֆրանսիայի ատելու-թիւնը։ Շատ հաւանական չէ որ Մակ—Մահօնը ցանկութիւն ունենայ այդ աստիճան արատա-ւորել իր անունը Ֆրանսիայի պատմութեան մէջ։

Աջակողմի բոլոր աշխատութիւնները Դէ-կազ դուքսին սենատի մշտնջենաւոր անդամ ընտրել տալու համար, անաշուղ եղան երրորդ

անգամ քուէարկութեան ժամանակ էլ։ Դէ-կազ դուքսը 122 ձայն ունեցաւ իր կողմ, իսկ հանրապետականների կանդիդատ Լըֆրան 127 ձայն ունեցաւ։ Բայց այս անգամ էլ կանդիդատներին ոչ մինը ձայների բացարձակ մեծամասնութիւն չունենալով, որոշումը մնա-ցել է չորրորդ քուէարկութեան որ կատար-ված կը լինի փետրվարի 4/16-ին որի հե-տևանքը դեռ չենք իմացել։

Դեպուտատների ժողովը շատ զբաղված է այժմ այս երեք զխաւար հարցերով։ Բիւզզէտի վիճարկութիւնը, լրագիրների պաշարման դրութեան պատճառով հրապարակների վրա ծախվելու վերաբերեալ երկու նոր և կարեւոր օրէնքների քուէարկութիւնը և դեպուտատ-ների ընտրութեան վաւերացումը։ Ժողովը որո-շել է շաբաթը հինգ օր նիստ անել, մէկ ժա-մից սկսելով մինչև եօթ ժամ, և վիճարկել այս կարեւոր հարցերի վրա։

Ֆրանսիաների մինիստր Լէօն Մէյ խնդրել է դեպուտատների ժողովին 331 միլիոն Ֆրանկի կրեդիտ երկաթուղու զանազան գծեր գնելու համար։ Պ. Մէյին աջողվել է, աշակողմեանների դիմադրութեանը հակառակ, իր առաջարկու-թիւնը յանձնել տալ Ֆրանսիաների մասնաժո-ղովին։

Պ. Ֆուրնիէ Կ. Պլոսում Ֆրանսիական դե-պան ընտրվել է և ասում են թէ նա պէտք է ներկայանայ ետրեւեան հարցի համար լե-նելու կոնֆերանցիայում Ֆրանսիական հան-րապետութեան կողմից։

ԱՆԳԼԻԱ

Լօնդոնի համալսարանական ժողովը 132 ձայնի դէմ 241 ձայնով, ուրիմ 109 ձայնի առաւելութեամբ, որոշել է որ այսուհետեւ կայնայք էլ կարողանան քննութիւն տալով համալսարանական աստիճաններ ստանալ այդ մարդկերանց հաւատար։

Այս նոր բարեկարգութեան հակառակ քուէ տուողների ճիշդ երկու երրորդ մասը, 132 անդամներից 84-ը, պատկանում են բժշ-կականութեան և վերաբուժութեան ֆակուլ-տետին, իսկ մնացած քուէները տուել են իրաւաբանութեան, գիտութիւնների և գեղ-արուեստների ֆակուլտետներում եղողները։ Ուրեմն այդ հակառակ կուսակցութեան մէջ բժիշկները կազմել են երկու անգամ աւելի մեծ բազմութիւն քան թէ միւս երեք ֆա-կուլտետները միասին։

Կանանց իրաւունքը պաշտպանող մեծա-մասնութեան ձայնակցել են միայն 22 բժիշկ։ Իսկ միւս ֆակուլտետների, որոնց ամբողջ ձայնն է 267, հինգ վեցերորդ մասը ձայ-նակցել է այս նոր որոշման։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

—Փարիզից հեռագրում են «Կէօնի Լրագիր» յունվարի 28-ից (փետրվարի 9-ին), որ Ֆրան-սիական մինիստրների խորհուրդը քննում էր այսօր Ֆրանսիական նաւատորմի Կ. Պոլիս ու-ղարկելու հարցը, բայց ոչինչ վճիռ չը տուեց, որովհետեւ վարչապետը յայտնեց մինիստրների խորհրդին, որ ռուսները Կ. Պոլիսը մինչև ան-գամ ժամանակաւորապէս չեն վերցնի։

—Կ. Պոլիսից հեռագրում են յունվարի 28-ին (փետրվարի 9-ին) «Pester Lloyd» լրագրին, որ Սալֆէթ-փաշայի փոխանակ գնեւալ իգնա-տելի և նա բանակցութիւնը կը շարունակէ երեկ Սէրվէր-փաշան, հետեալաւ նոր մինիստր-նախագահ Ամէդէ վէֆիկ-փաշան կը կատարէ ժամանակաւորապէս արտաքին գործերի մինիս-տրի պաշտօնը։»

—Կ. Պոլիսից հեռագրում են յունվարի 28-ին (փետրվարի 9-ին) «Neue Freie Presse» լրագրին, որ Սալֆէթ-փաշան որը պէտք է Աղրիանօպօլ գնար գնեւալ իգնատելի և նա խաղաղական պայմանների մասին բանակցելու, հրաժարական տուեց, իսկ այս պատճառով բանակցութիւն-ների սկսելու ուշացաւ։ Մահմուդ-Պաշա-փա-շային հրաժարեցին Սուլթանը։

—Բերում ենք այստեղ մէկ շատ հետաքրքիր պատմութիւն անգլիական զինուորական գնդա-պետ Բորտոնիից (Մարկ-Բէյն) հաղորդված, որը թիւրքաց ծառայութեան մէջն էր գտնվում, թիւրքաց զօրքերի Աղրիանօպօլից Կ. Պոլիս յետ քաշվելու մասին։ Այս պատմութիւնը տպված է «Morning Post» լրագրում յունվարի 28-ից (փե-տրվարի 9-ին)։ Ճերը մինչ ևս չէ լիւր-Բորտոն, որտեղ մտադիր էինք գիշեր անցկացնել միայն, քաղաքի գալմագամը և ժողովրդի գլխաւոր-ները, արտասուքը աչքերին եկան մեզ խնդրե-լու որ Բորտոն մնանք մի քանի ժամանակ, պաշտպանելու նրանց չէրքէսների յարձակումնե-րից։ Առաջին երկու օրվայ միջոցում 9-ին (21-ին) և 10-ին (22-ին) յունվարի, մեզ աջողեցաւ կա-լանաւորել այս սատանայ չէրքէսները մի քանիսներին։ Գտնուեցանք և Սէրվէր մենք հրամայեցինք պատժել նրանցից 30-ին փա-շտերով և չորսին էլ չղթալակալ ուղարկեցինք Կ. Պոլիս։ Նրանց հարկաւոր էր ծակծկել, բայց որովհետեւ մահմուտականներ են, ուրեմն կատկածում եմ, որ չէինք գտնի ոչ մի մարդ որ համաձայնէր հրացան արձակել նրանց վրա, իսկ մենք շատ թոյլ էինք և չէինք կարող ապստամ-բութիւն բարձրացնել մեր զօրքերի մէջ։ Անկա-նուն չէրքէսները իսկական աւազակներ են, նրանք ամենից առաջ սպանում են որ կողողան, բայց մի անգամ սկսելով սպանել շարունակում են սպանութիւնները դուրսնութեան համար, մինչև անգամ առանց մի որ և իցէ աւարի յոյս ու-նենալու։ Փանի որ մենք լիւր-Բորտոն էինք, ոչ մէկը նրանցից չը համարձակեցաւ քա-ղաք մտնել, բայց չղթալակներում երկու հարկու-րից մինչև երեք հարկու մարդ ամեն տեսակ դա-ղանութիւններ էին անում։ Մենք նրանցից շատ աւաշներ խելցինք և բաժանեցինք այն թշուա-ներին, որոնք ամենից շատ հարկաւորութիւն էին գրում դրանց մէջ։ Չինուորական մինիստր Բէտֆ-փաշային հեռագրի ուղարկեցինք, որով յայտնեցինք նրան գործերի դրութիւնը և խըն-դում էինք նրան որ փոքրաթիւ հեծելազօրք ու-ղարկէ կարմաւորելու այս գաղաներին քաղաքի չղթալակներում։ Պատասխանելով մեր հեռա-գրին, մեզ հարձակութիւն էին յայտնում մեր արած գործի համար, բայց հեծելազօրք մասին ոչ մի խօսք չէր տալիս։ Բէտֆ-փաշան հրաւի-րում էր մեզ մնալ քաղաքում մինչև ռուսների Աղրիանօպօլից երկաւը և հաղորդել նրան ամեն բան ինչ որ կը պատահի։ Մենք էլ մնացինք Բորտոն մինչև որ ռուսները մտնեցան մեզ մէկ մղին տարածութեամբ և մենք հեռա-ցանք, թողնելով բնակիչներին կիսով չափ հա-ւատացած իրանց ապահովութեան մասին։ Թըշ-նամու մտենալու լուրը հասնելով չէրքէսներին, իսկին բոլորն էլ փախան, միայն այն ժամանակ լիւր-Բորտոն թշուաւ բնակիչները զգացին իրանց ապահով և թափելով արտասուքներ չնոր-հակարկութիւն էին յայտնում մեզ։

—«Հիւրի հեռագրական ընկերութիւնը» հա-ղորդում է Սիրիայից յունվարի 29-ին (փետր-վարի 10-ին) որ Կ. Պոլիսից ստացած տեղեկու-թիւններից երեւում է, որ Մէհմէդ-Ալի-փաշան յոյների թէսալիայ դուրս գալու պատճառով, մի քանի օրով յետաձգեց իր գնալը Կրիտէ կղզու վրա։ Նրան կուգեկէն 3000 մարդ թիւրքաց կա-նոնաւոր զօրքից։

—«Neues Wiener Tagblatt» լրագրից յուն-վարի 30-ից (փետրվարի 11-ին) հաղորդում է, որ խաղաղական հինգ նաւից բաղկացած էսկադրա որ խարխիս ունէ գցած Սալօնիկի մօտ, և Ֆրան-սիական էսկադրան հրաման ստացան մտնել Կարդանէլ։

—«Presse» լրագրի Տիւրնովի թղթակիցը հե-ռագրում է փետրվարի 13-ին, որ գնեւալ իգ-նատելով ուրբաթ օր հասաւ Աղրիանօպօլ։ Թիւր-քաց հաւատարմատարները նոյնպէս հրաւրված են այս քաղաք խաղաղութեան պայմանների մասին բանակցութիւնները շարունակելու հա-մար, Բանակցութիւնները կը սկսվին փետրվարի 16-ին և պետք է վերջանան մինչև մարտի 1-ը։ Այդ բանակցութիւնների հետեւին իմաց կը տրվի կոնֆերանցիային, որպէս կատարված իրո-ղութիւն։

ՄՇԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՏԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

ՎԻԵՆԱ, 13/25 փետրվարի։ Այստեղ կարծում են որ եթէ Աւստրիան կը շարունակի բռնել իր սպանաւել գիրքը, Ռուսաստանը

կը պահանջէ որ Սերբիային միանայ Բոսնիա նահանգի մի կողմ։ Այդ տեսակ դէպքում Աւստրիան, ինչպէս կարծում են Վիենայի զիւլյուստները, պատերազմ կը յայտնի Ռու-սաստանին։ Բերլինից հեռագրում են «Mon-tags-Revue» թերթին, որ Կերմանիայի կա-բինետը անտարբէր աչքով կը նայէ եթէ աւ-ստրիական զօրքերը կը պաշարեն Բալկանեան թերակղզու մի մաս, մինչև եզեւան ծովը մանաւանդ եթէ այդ քայլը անելով Աւստրիան չի պահանջէ իր համար ոչինչ վարձատրու-թիւն, այլ կուղարկի իր զօրքերը անհրա-ժեշտութեանց ստիպված։ Գործի այդ տեսակ ելքը հնարաւոր են համարում և Վիենայում։ Կ. ՊՈԼԻՍ, 12/24 փետրվարի։ Մեծ Իշ-խան Նիկոլայ Նիկոլայիվիչն անտատեղին դան-վում է այժմ Սան-Ստէֆանայի մէջ, սրտեղ եկան թէ ռուսաց և թէ թիւրքաց հաւա-տարմատարները խաղաղական պայմանների վրա բանակցելու համար։ Ռուսաց գնդապետ իշխան Կանտակուզին հասաւ Սան-Ստէֆանո որ կարգադրի ռուսաց զօրքերի թիւրքաց մայրաքաղաքը մտնելու համար հարկաւոր պատրաստութիւնները։ Երբ ռուսները մտան Սան-Ստէֆանո, թիւրքերը հեռացան Մա-քրէքէյ։

ԼՕՆԻՍ, 13/25 փետրվարի։ Առաւօքայ լրագիրները անմիջեւ կերպով են նայում մօտիկ ապագայի վրա, և չեն հաւատում հաշտութեանը, որովհետեւ նրանց կարծիքով Ռուսաստանը չափից դուրս խիտ պահանջ-ներ է դնում Լրագիրները պատերազմական ոգի են ցոյց տալիս։ «Times» լրագիրը ասում է «Միայն այն ժամանակ խաղաղութեան վրա յոյսեր կարելի է ունենալ, եթէ Ռուսաստանի պահանջութիւնները չափաւոր կը լինեն։ Միայն ուրիշ պետութիւնների ցանկութիւն-ները ի նկատի ունենալով, Ռուսաստանը կարող է առաջն առնել մի նոր պատերազմի յայտն-վելուն, մի պատերազմի, որ հեշտութեամբ կանցնէր Թիւրքիայի սահմանները։

ԼՕՆԻՍ, 13/25 փետրվարի։ Լօրդ Լայնս նշանակված է անգլիական ներկայացուցիչ կոնֆերանցիայում։

Կ. ՊՈԼԻՍ, 14/26 փետրվարի։ «Հաւաք» հեռագրական ընկերութիւնը հաղորդում է որ խաղաղութեան պայմանները հաստատ-ված են։ Հիմնական պայմանադրը այսօր ստորագրված կը լինի Սան-Ստէֆանայի մէջ։ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիվիչ այցելեց Սուլթանին։ Հաշտութիւնը կանոնավել Կ. ՊՈԼԻՍ հաշտութիւն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ «Правит. Вѣстн.» պաշտօնական լրագիրը հաղորդում է։ «Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել՝ Եւրօպական Թիւրքիայի տեղերում որտեղ գտնվում են մեր զորքերը, նշանակել որպէս օգնական առողջական մասնաժողովի, հիգիէնայի (առողջապահութեան) մէջ մաս-նագէտ մի բժիշկ, տալով նրան ամսական 300 ռուբլ ռոճիկ, 400 ռուբլ միանուագ ճանա-պարհի ծախս, բացի գնալ ու գալու համար նշանակվող փոստային ծախսերից։ Այդ բժիշ-կը կը համարվի 6-որդ կլասի աստիճանաւոր։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Ռուսաց ռուբլ արժէ Լօնդոնի վրա 25^{31/32} շէն, Կերմանիայի վրա ռուսաց 100 ռուբլ արժէ 221^{1/2} մարկ, Փարիզի վրա 271^{1/2} Ֆրանկ, Բերլինի վրա 272 Ֆրանկ։ Ռուսաց 50% պետական բանկի տոմսակը առաջին շըջանի արժէ 96^{1/8} ռուբլ, երկրորդ 95^{3/4} ռ., եր-րորդ 95^{1/2} ռ., չորրորդ 94^{3/4} ռ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսակը արժէ 233 ռուբլ 50 կօպ., երկրորդ 234 ռուբլ արեւելեան փոխառութեան տոմսակը արժէ 93^{1/8} ռուբլ։ Պոլսի միջոցով գինը 7 ռուբլ 60 կօպէկ է։ հրամայութիւն թողել, վերջ աւելի հաստատ է դառնում։

